

Ս. ՄԵՍՐՈՊԻ ԸԻՆՆԻԸ

«Զի թէպէտ և եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում զործք արութեան գտանին զործեալ և ի մերում աշխարիս և արժանի զըոց յիշատակի...» Մովսէս Խորենացի:

Մեր նահապետ Պատմագիրը այս մի փոքրիկ նախագասութեան մէջ տալիս է Հայոց պատմութեան ամբողջ ընթացքի ճշգրիտ բնութագիրը: Մի փոքրիկ ազգ, երկրի տարածութեամբ փոքր, բնակչութեամբ սակաւաթիւ, շատ անգամ օտարների լծի տակ տառապած—սակայն և այնպէս մի ազգ, որ իւր մէջ բաւականաչափ արի ու ընտիր գործեր կարող է հանդէս բերել, որոնք արժանի են յետնորդ սերունդներին աւանդուելու, փառքի և պարծանքի գործեր, որոնցով իւրաքանչիւր անգամ կարող է հպարտանալ:

XX-րդ դարի հայ երիտասարդը, մանաւանդ երբ նա տարուած է պատմափիլիսոփայական, որոշ տեսութիւններով, կարող է շատ անգամ անտարբերութեամբ, այո՛, նոյն իսկ արհամարհանքով նայել այս փոքր ազգի վրայ, որի բովանդակ կեանքը համակ մարտիրոսութիւն է եղել: Մեր դարու հայ երիտասարդը յուսահատութեան մի սև բոպէում կարող է իւր բախտը անիծել, որ հայ է ծնուած, զաւակ մի ազգի, որը ստիպուած է եղել շատ անգամ իւր Ֆիդիկական գոյութեան համար զոհել իւր լաւագոյն ժամանակը, իւր մտաւոր ուժերն ու խանդը. և հնարաւորութիւն չի ունեցել բոլորովին ազատ ու արձակ ստեղծելու, հոգեպէս խաղաղ ապրելու, խաղաղ վայելելու ընդհանուր համամարդկային քաղաքակրթութեան բարիքները:

Սակայն բարեբախտաբար մարդկային ազգի պատմութիւնը, նոյն պատմափիլիսոփայութեան ուշադիր ուսումնասիրութիւնը մեզ բոլորովին այլ հիմքեր է տալիս, ամուր ու հաստատուն, որոնք մեզ բոլորովին այլ տրամադրութեան, մանաւանդ թէ այլ աշխարհայեացքի հանդէպ են դուրս բերում: Բարեբախտաբար մարդկութեան պատմութիւնը արժանիքներն ու վաստակը, արութեան գործերն ու ցեղային առաքինութիւնները չի չափում թուի-բազմութեան կամ սակաւութեան նայելով—այլ այն ներքին հոգեկան, անտեսանելի թափի, ինտենսիւթեան համաձայն, որով մի ազգ նետուում է ընդհանուր քաղաքակրթական ուղին ու տքնում առաջ գնալ այդ ճանապարհով, նորանոր հորիզոններ: Նուաճել այդ ճանապարհի վրայով: Այդպէս են դատուել մինչև օրս ազգերը պատմութեան մէջ. այդպէս պէտք է դատենք նաև մեր ազգը. ուրախութեամբ պէտք է ասենք, որ Հայոց ազգի պատմութեան օտար ուսումնասիրողները նոյն տեսակէտն են ունեցել—իրանց օբյեկտիւ վերաբերմունքի մէջ:

Եւ եթէ մենք այդ կողմից մօտենանք մեր պատմութեան, քննենք քաղաքակրթութեան, յառաջադիմութեան համար հայի հանդէս բերած եռանդն ու ջանքերը, չափենք այն զոհերը, որ այս փոքրիկ ազգը տուել է յանուն իւր կուլտուրայի, իւր հոգեկան ժառանգութիւնների, յանուն իւր ինքնուրոյն լեզուի ու ազգային աւանդութիւնների, յանուն իւր քաղաքական ամբողջութեան և եկեղեցական անկախութեան, ապա երբ ի նկատի ունենանք այն սարսափները, որոնց միջով հայն ստիպուած էր իւր համար ճանապարհ հարթել, այն համատարած մռայլն ու վայրի դարերը, երբ մեր ազգը լոկ ֆիզիկական գոյութեան մասին կարող էր մտածել—պէտք է խոստովանենք, որ չափ չենք գտնի—չափելու հայ ազգի անցեալում հանդէս բերած կուլտուրական եռանդն ու քաղաքակրթական նախանձախնդրութիւնը, նկարագրելու այն բիւրաւոր ու բիւրաւլեզու դժուարութիւնները, որոնց յաղթելով միայն հնարաւոր էր բարձրանալ դէպի վեր:

Այո, տարածութեամբ փոքր երկրի տէր և շատ անգամ աներկիր, թուով աննշան—բայց մեղանում էլ կան պարծանքի գործեր, որոնք այսօր—XX դարի ամեն մի խոհուն հայի սիրտը կարող են բուռն հրճուանքով լցնել, որոնցով կարող ենք այսօր հպարտանալ, որոնց շնորհիւ կարող ենք վստահութիւն ունենալ մեզ ևս ընդհանուր քաղաքակիրթ մարդկութեան մի հատուածը համարելու: Եւ աւելի այսօր քան երբեկիցէ:

Հէնց այսօրուայ մեծ յոբելեանը ուրիշ բան չէ, քան մի խնկելի յիշատակ այն մեծ շրջանի, որով սկիզբ էր դրւում մեր ազգային քաղաքակրթական աշխատանքին, երբ հայ մտաւոր ուժերի առաջ նոր, գրաւիչ ստպարէզ էր բացւում, ջանալու և տքնելու ազգային անդաստանում, մօտենալու բարձր կուլտուրայի, առաջադէմ քաղաքակրթութեան տէր ազգերին:

*
* *

Բնութիւնը, տիեզերական օրէնքները, մեզ անխմանալի, անտեսանելի կերպով փոփոխութեան, և մանաւանդ թէ առաջադիմութեան անդուգական պահանջն են դնում. և մարդկութիւնը իւր բոլոր հատուածներով՝ որպէս մի անբաժան ու հարազատ մասնիկը այդ տիեզերական ամբողջութեան, տողորուած է առաջադիմութեան այդ անհման տենչով և այդ ճանապարհի վրայով առաջ է քայլում իրան յատուկ հասարակական իւրատեսակ օրէնքներով: Այդ տեսակէտից ցնորամիտ չէ և ոչ էլ մտացածին այն տեսութիւնը, որի համաձայն մարդկութեան ամեն մի հատուած ընդհանուր քաղաքակրթական աշխատանքի մէջ իւր բաժինը պէտք է ունենայ:

Ազգերի կեանքը չի չափւում այն պատերազմներով և անընդհատ կռիւներով, որոնցով լի է ամեն մի ցեղի պատմութիւնը. դա կեանքի լոկ արտաքինն է, նրա դրսի՝ բոլորին տեսանելի երեսը. ազգերի կեանքի մէջ կարևորը այն ներքին պայքարն է, այն գերմարդկային ճիգերը, այն

անտեսանելի, բայց խոր մաքառումը, որ նրանք մղում են յանուն առաջադիմութեան և լաւագոյն ապագայի: Այդ պայքարի մէջ բոլոր ազգերը, մեծ թէ փոքր, բազմաթիւ թէ սակաւաթիւ—բոլորը հաւասար են. հոգեկան արժանիքների համար մղած պայքարը բոլոր մանր ու խոշոր ազգերին միացնում, հաւասարեցնում է ու դարձնում մի հսկայ ընտանիքի անդամներ, մի ընտանիքի, որ իւր բոլոր անդամների հետ միասին դիմում է իրագործելու տիեզերական օրէնքների տիրական կամքը—ձգտել յառաջադիմութեան, միշտ ձեւափոխուելով, միշտ այլակերպուելով, բայց և միշտ առաջադիմելով:

* * *

Ազգերի անցեալը թաղուած է անմեկնելի խաւարի մէջ: Հայոց ազգի մասին այսքանն է յայտնի, որ Քրիստոսից մօտ 7 դար առաջ մեր պապերը եկել են և այսօրուայ Հայաստանին տէր դարձել: Ուրեմն 1000 տարուց աւելի հայը ապրել է Հայաստանում առանց ունենալու իւր ազգային հոգեկան կեանքը, առանց ազգային գրի ու գրականութեան, առանց ինքնուրոյն քաղաքական տենդենցների: Այն ժամանակները հայի կեանքը ձուլւում էր հարեւան ազգերի կեանքի հետ ու ազգային ինքնուրոյնութիւնը կորչում, անհետանում: Ոչ մի հաստատուն ու վստահելի տեղեկութիւն չունենք մեր նախնական պատմութեան մասին. ոչ մի լուսաւոր շող չի գալիս մեր իմացութիւնն հարստացնելու և ոչ մի ճառագայթ չի թափանցում այն խոր մթութեան մէջ, որը ձգւում է մեր պատմութեան անդունդների վրայով:

Եւ յանկարծ, այդ անկուլտուր, ապագային հազարամեակից յետոյ լուսաւոր ճառագայթների մի ամբողջ փունջ է թափւում, մի հրացայտ արեգակ է ծագում Հայոց երկնակամարի վրայ, որ լուսաւորում, բոցավառում է շրջապատը: Մեր մեծ նախնիքների կողքին ելնում բարձրանում են մեծագոյնները և ամենքը միասին պսակ բոլորում

ս. Մեսրոպի, ս. Սահակի և Վռամշապուհ արքայի հոյակապ ճակատների շուրջը:

V-րդ դարում սկիզբն է դրում Հայի մտաւոր, քաղաքակրթական աշխատանքին: Ստեղծւում է հայ գիրն ու հիմնարկւում հայ գրականութիւնը. բացւում են առաջին հայ դպրոցներն ու կազմւում առաջին հայ այբբենաբանները: Հայն արդէն ստեղծագործական ճանապարհի վրայ էր ելած ու նրան մնում էր այնուհետեւ անշեղ ու անդաւաճան շարունակել քաղաքական մեծ գործը:

Ս. Սահակ, ս. Մեսրոպ և Վռամշապուհ իրանց բախտաւոր ու գերմարդկային ճիգերի մէջ ստեղծեցին մի անկողոպտելի ժառանգութիւն, որ հիմնուած էր հայի հոգեկան կարողութեան վրայ, նրա ներքին—մտաւոր ընդունակութիւնների վրայ: Նրանք մեզ, յետնորդ սերունդներիս մի աւանդ թողին, մի սրբազան աւանդ, որ այնուհետեւ փորձաքար պէտք է դառնար հայ հոգեկան կարողութիւնների համար, որի վրայ հայը պէտք է չափէր իւր ուժերը և աշխարհի առաջ ցոյց տար, թէ նա կարճ է, ընդունակ է այդ աւանդը պահել—պահպանելու, թէ նա ընդհանրապէս արժանի է այդ աւանդին:

V դարի մեր մեծ նախնիքների այդ աւանդը ես հետեւալ կերպով եմ հասկանում:—Նոքա մեզ միջոց տուին գիր ունենալու ու գրականութիւն. նոքա հնարաւոր դարձրին մեզ համար մասնակցելու ընդհանուր մարդկութեան քաղաքակրթական մեծ գործին, որ մենք ևս մեր չափով նպաստենք մարդկային ցեղի առաջագիմութեան: Բայց միայն այդ նպատակի համար անհրաժեշտ չէր անպատճառ տքնիլ ու տանջուիլ սեւեալան, ազգային գիր ստեղծելու, ազգային նշաններով ու ազգային հնչիւնագրերով: Մեզ հարկան ապրում էր մի մեծ ազգ՝ յունա-բիւզանդական ազգը, որ ունէր իւր փառաւոր անցեալն ու գրականութիւնը, որ ս. Մեսրոպի օրերին ևս կարող էր իւր հեղեանական նշանաւոր կուլտուրայով հպարտանալ ու աշխարհի զարմանքի առարկայ լինել: Եթէ հայը ցանկանում էր լուրջ մասնակցել քաղաքակրթական աշխատանքին, եթէ ս. Մես-

քողի նպատակը լինէր հայի առաջ բաց անել լուի քաղաքակրթութեան դռները, առաջադիմութեան ուղին ցոյց տալ նրանց, ապա այդ նպատակին հասնել կարելի էր նաև յունաց գրի և գրականութեան միջոցով, յոյն դպրոցի և ուսուցչի աջակցութեամբ: Նոյն նպատակին հայերը հասնել կարող էին նաև ասորական կուլտուրայի մէջ, ասորի դպրութեան և ուսման, նրանց գրականութեան և գրի միջոցով: Հայաստանի հարեան ազգերը այդ կողմից միշտ հիւրասէր են եղել, նոքա արժանի են այսօր մեր շնորհակալութեանը: Եւ պէտք է ասել, որ այդ հիւրասիրութիւնը վայելում էր Հայոց ազգը ս. Մեսրոպից առաջ և նոյն խել նրա ժամանակ: Հայոց գրերից առաջ մինչև հինգերորդ դարը շատ հայեր կային անշուշտ, որոնք քաջ տեղեակ էին յունական և ասորական և պարսկական դպրութեան, որոնք վարժուում էին օտար գրի ու դպրութեան մէջ և աշխատում իրանք էլ տեղ գրաւել ընդհանուր քաղաքակրթական աշխատանքի մէջ:

Բայց մենք տեսնում ենք — որ այդ ամբողջ աշխատանքը ապարդիւն և աննպատակ է որակւում Եւրդ դարի մեր մեծ նախնիքների կողմից: Այդ օրերին է, որ մի աստուածային իմաստութեամբ լցուած՝ հայը խոր գիտակցութեան է դալիս, թէ բաւական չէ ընդհանուր քաղաքակրթական հակումներ ունենալ, բաւական չէ ցանկանալ տեղ գրաւել ազգերի սրարշաւ յառաջադիմութեան մէջ, այլ և հարկաւոր է դրա համար սեփական ազգային միջոցներ ունենալ — ինքնուրոյն և իւրատեսակ, միայն ազգին մատչելի, միայն նրան հասկանալի:

Այդ օրերին էր, որ մեր եկեղեցական ու քաղաքական կեանքի ղեկավարները այն ուղիղ եզրակացութեանն են գալիս, թէ իւրաքանչիւր ազգ, եթէ ուզում է ապրել և յարատև կեանք ունենալ, պէտք է մասնակցի ազգերի վերելքին դէպի կատարելագործութիւն. բայց պէտք է մասնակցի իւրապեսակ, իւրայատուկ միջոցներով — ազգային — ցեղական յատկութիւնների զարգացմամբ:

Եւ ստեղծւում է հայ գիրն ու գրականութիւնը — իբրեւ

անդրանիկ զաւակ հայի ազգային ինքնագիտակցութեան, իբրեւ մի արտաքին նշան այն հոգեկան ծանր աշխատանքի ու տառապանքի, որ հայը կրում է իւր հոգու մէջ: Մաշտոցի գիւտը, Սուրբ Սահակի և Վռամշապուհ արքայի նախանձախնդիր, եռանդուն գործը 15 երկար ու ձիգ դարերի արշալոյսին ծագած—յորդոր են կարդում սուրբ ու թանգ պահել այն աւանդը, որ նոքա մեզ են կտակել, պահել մեր մէջ, խնամել ու զարգացնել այն խոր գիտակցութիւնը, թէ իւրաքանչիւր ազգ մարդկութեան յառաջագիմութեանը մասնակցել կարող է, իւր ինքնուրոյն, իրան յատուկ միջոցներով, իւր միջավայրի մէջ ստեղծած լեզուով ու գրով, մտքով ու հոգով, իւր հոգու խորքում ապրած տառապանքներով ու պայքարով:

Եւ թող հրճուին ս. Սահակի, Մաշտոցի և Վռամշապուհի անմահ հոգիները, որովհետեւ 1500 տարուայ Հայոց կեանքը եղել է հայի նահատակութեան անընդհատ մի շղթայ յանուն նոցա տուած պաշտելի այդ աւանդի: 1500 տարուայ ընթացքում հայը գերբնական ճիգեր է թափել դուրս գալու քաղաքակրթութեան գրաւիչ ուղին մերթ հանձարի փայլուն ու փառաւոր ցայտումներով, քաղաքակրթական անուանի ու հռչակաւոր վաստակներով, մերթ լուռ ու անշշուկ տառապանքով, տանջանքի ու վշտի աներեւակայելի ապրումներով: Ու միշտ էլ, նոյնիսկ մեր աշխարհի համատարած խաւարի օրերին, որոնք, աւախ, դարեր են տևել, միշտ էլ, ասում եմ հայը իւր հոգևոր աչքի առաջ է ունեցել մեր մեծ նախնիքների սրբազան աւանդը, հայի մեծագոյն աւանդը և իբրեւ մի փրկարար փարոսի, շարունակ դէպի նա ձգտել, իւր տառապանքների միջից նրան աղօթել:

Այսօր քան երբեք է կարող ենք ուրախութեամբ ասել, որ ս. Սահակի ու ս. Մեսրոպի աւանդը փրկուած է այդ դարերի յախուռն ու վայրի շարքերի միջից ու մեզ հասած. և վատ պէտք է լինենք, որ չկարողանանք այսուհետեւ ևս մեր դրօշակը բարձր պարգած առաջ տանել ու յանձնել ապագայ սերունդներին այն աւանդը,

որ անվթար ու ապահով մեզ է հասած նախորդ սերունդներից:

Այսօր մի սրբազան սեփականութիւն ունենք միայն, որով մեզ հպարտ ենք անուանում, և որը ապագայ առաջադիմութեան, ազգերի քաղաքակրթական ապագայ աշխատանքին մասնակցելու մեզ հաստատուն գրաւականներ է տալիս: Պահենք մեր գիրն ու գրականութիւնը, փայփայենք մեր դպրոցն ու ուսումը, և դրանով կատարած կը լինենք մեր խնկելի հայրերի աւանդը, դրանով արժանի կը լինենք 1500 տարուայ հայ սերունդների երկար շարքերին:

Թող մեր ականջին անդադար հնչի V դարից եկող այն բազմախորհուրդ կոչը. առաջ, միշտ առաջ, դէպի քաղաքակրթութեան բարձրունքները, սակայն ինքնուրոյն ուղիներով, պահելով ցեղային ուժերը, ազգային սրբութիւնները:

Եւ մարդկային ազգի կատարելութիւնը պատկերացնում եմ անսահման բարձրունքում, անհասանելի վերելում լուսադարդ ու հրավառ, որից կայծերը ջերմագին ու կախարդիչ, ցանում են ամեն կողմ, դէպ՝ իրան քաշելով մարդկութեան բիւրաւեղու և այլազան հատուածները: Եւ ազգերն ու լեզուները, ամեն մէկն իւր հասկացողութեան, իւր ընդունակութիւնների չափով, իւր սեփական տարազով ու լեզուով, իւր հոգով ու մտքով, գիմում է դէպի այն բարձրաբերձ լուսեղէն կամարը, դէպի այն անմատչելի կատարելութիւնը, մերթ սայթաքելով ու գլորուելով, մերթ դանդաղ ու յամբընթաց, բայց միշտ հաստատուն ու շեշտակի:

Ազգերի համատարած առաջադիմութիւնը նրանով է ներդաշնակ ու գեղեցիկ, որ մարդկութեան հատուածներից իւրաքանչիւրը պահում է իւր պատկերը, իւր լիակատար ինքնուրոյնութիւնը: Այդ առաջասլացքի մէջ մենք շփուենք մեր հարեանների, մեզանից կուտուրապէս բարձր ազգերի հետ, սովորենք նրանց փորձից ու կեանքից շատ բան, բայց պահենք միշտ մեր ցեղային հոգեկան ինքնա-

յատուկ կազմը, պահենք, պինդ պահենք մեր մեծ նախնիքների սրբազան աւանդը:

Մաշտոցը մեզ ևս իրաւունք է տուել մասնակցելու համամարդկային այդ ընդհանուր մրցակցութեանը, մենք ևս իրաւունք ունենք, մեզ յատուկ եղանակներով ու միջոցներով դիմել դէպի կատարելութեան քարձրագոյն կատարները: Եւ թող խորթ չթուայ ոչ մի ազգի և լեզուի, որ մենք պինդ որոշած ենք այդ վերելքով ու այդ նշանաբանով անընդհատ ու անսպաթաք քայլել դէպի առաջ, դէպի նորանոր ու աւելի բախտաւոր մեծ յորելեաններ:

ԳԷՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ

12/x 1913.

